ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«26» 04 2013 թ.

< 7-666

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
պրն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 2013թ. մարտի 29-ի թիվ 02/12.3/4027-13 գրության՝ հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության և ՊՐՈՊԱՐԿՈ մասնաճյուղի հաստատման և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չկան:

Միաժամանակ, Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության և ՊՐՈՊԱՐԿՈ մասնաճյուղի հաստատման և գործունեության մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական վարչության եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հ. Բաղդասարյան

010-10545
26 04 2013

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության և ՊՐՈՊԱՐԿՈ մասնաճյուղի հաստատման և գործունեության մասին» համաձայնագրի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ

Նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալ նկատառումները.

1. Առաջարկում ենք խմբագրել Նախագծի հարկային արտոնություններին վերաբերող դրույթները՝ դրանք համապատասխանեցնելով՝
   ա) հարկային արտոնությունները համաֆինանսավորմամբ փոխարինելու՝ ՀՀ կառավարության կողմից որդեգրած սկզբունքին.
   բ) ներկայումս արդեն իսկ գործող նմանատիպ համաձայնագրերով նախատեսված հարկային արտոնություններին վերաբերող համապատասխան դրույթներին (օրինակ՝ «ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև ֆինանսական համագործակցության մասին», «ՀՀ կառավարության և Շվեյցարիայի Համադաշնության կառավարության միջև տեխնիկական, ֆինանսական և հումանիտար համագործակցության մասին» և այլ համաձայնագրեր):
2. Նպատակահարմար ենք համարում Նախագծի Հոդված 4-ը (Բանկային կանոնակարգ), Հոդված 5-ի (Փոխարկելիություն և փոխանցում) 5.1 կետի 2-րդ ենթակետը և 5.5 կետը համաձայնեցնել ՀՀ կենտրոնական բանկի հետ:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

18.04.13թ.

Կատարող՝ Ն. Ափուջանյան